



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18455



Ա. Հայրեան

ԿԵՐԵՐԻ ԳԱՈՒ

ՊԱՏՐԻՆԻ Ք

№ 4.

891. 99

Կ-42

599

1903

Մ. Տ Պ Ո Ր Ա Յ Ա Խ Ա Յ Ա Խ
Ա Յ Ա Խ Ա Յ Ա Խ Ա Յ Ա Խ Ա Յ Ա Խ

06 FEB 2009

ETOS

19 NOV

391.99

42

Ա. ԱՀՐՈՆԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ԴԱՍԸ

Պատմուածք

№ 4.

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մովսէս Վարդանեանցի
1903

5.02.2013

18455

ԱՐՄԵՆԻԱ

ԿԵԱՆՔԻ ՊԱՍՀ

Առ սիրում եմ լինոթիւնը
մարդկային տանշանքի.
ԱԼՖՐԵԴ-ԴՐՈՒՅԻ

Дозволено Цензурою. 13 Октября 1903 г. Тифлис

Մենք նոր աւարտել էինք համալսարանը,
ևս և ընկերո՞ւ երկուսով էլ բժիշկ. տարիների
յամառ աշխատնիքներս վերջապէս պնակուեց
յաջողութեամբ, մենք նորաւարտ բժիշկներ
էինք: Այս միտքը մեր սիրությունում էր և
հզմուանքով և հպարտութեամբ. կեանքը մեր
առաջ բաց էր, ապագան ժպտուն, վայելքների
մի շարք:

Մի փոքր հանկստանալու և մեր ապա-
գայ անելիքի մասին մասնաւու համար, մենք
երկուսով էլ իմ հայրենի քաղաքը ելանք: Ըն-
կերս տեղաւորուեց մի աժանագին հիւրահո-
ցում, իսկ ես ծնողներիս մօտ:



806-2009

ԳԵՂԱԿԱՆ
ԱՄԱՆՈՒՅԹԻՐԱՆ



Յաջորդ օրը, երբ ես ընկ թեան գնացի, առաջին բանը որ տշքով շիկաւ, դա նրա զրան վրայ կպցրած այցկարան էր՝ «բժիշկ Արաքսեան»։ Ինձ էլ բան պէտք էր, «բժիշկ Արաքսեան» պուալով ներս ընկայ սենեակ։ Նա մի փոքր կարմրեց, ժպտաց, սպա ձեռքերը շփեց գոհութեամբ։

—Հը, մեր տղայ, լաւ ես շտապել։

—Շտապել, ինչո՞ւ, մի՞թէ մենք այդու բժիշկ չենք, պատասխանեց նա մի առանձ, ինքնաբաւականութեամբ։

—Բժիշկներ ենք, միայն իմ զրան վրայ այդպիսի այցկարա չը կայ, և եռ կարողաց քնել այս գիշեր, իսկ դու, ինչպէս երեւմ է, չէիր կարող առանց զրան քնել, պատասխանեցի ես ծիծաղելով։

—Հանաքով ասացիր, բայց հաւատացած եղիք, որ ես վաղուց այնպէս հանգիստ չէի քնել, ինչպէս այս գիշեր քնեցի։

—Եւ երազներ էլ տեսար։

—Եւ երազներ էլ տեսայ։

—Սիրուն, գրաւիշ երաշներ։

—Օ՛, չափաղանց գրաւիչ։

—Ճիշտ այնպիսի երազներ, որոնց մասին այնքան խօսում էիր ուսանողութեանդ ժամա-

նակ և որ ա, հասնելը քո կեանքիդ նպատակ ես ընտրու վարուստ աղջիկ, շքեղ տուն, կառք։ —Ճիշտ այդպիսիները՝ հարուստ աղջիկ, շքեղ տուն, կառք։

—Աւրեմ այն քամիները դեռ գլխիցդ չեւ դուրս եկել։

—Քամինեմը, խեղճ, վրայ բերեց նա այս անգամ կատարեալ լրջութեամբ։ քամինեմը քո գլխումն են, եթէ կամենում ես, իսկ ես տեսնում եմ կեանքը, ինչպէս որ նա կայ, ինչպէս եղել է, և պիտի լինի։ Ես ապրել եմ ուղում, դա իմ իրաւունքն է, ինչպէս և ամենի իրաւունքն է։ Երբ ես տարիների ընթացքում շան պէս չարչարում էի, պանիր ու հացով էի կերպակրում, անգուն գիշերներ անցկացնում հաստ հատուների վրայ, հնացած գիտկներ կարատում և քրքրում, այդ իմ դժոխային կեանքի շրջանում ես ոչ ոքից պահանջ չունեցայ, ոչ ոք ինձանով չը հետաքրքրուեց էլ, իրաւունք ունէին, այժմ էլ հերթն իմն է և ես պիտի ապրեմ, պիտի ապլեմ։ Դրա համար եմ չարչարուել, դրա համար եմ սովորել։ Զարիք շեմ անի ոչ ոքի, անազնութիւն չիմ անի եղբոքը, կը բժշկեմ։ Դա իմ պարագն է, վարձ կը վերցնեմ։ Դա էլ իմ իրաւունքն է, ահա իմ բարոյական սկզբունքները։

— Իսկ եթէ մարզը մեռնու և չի ու-
ղում փող տալ, բժիշկ կանչել, ^{անգովհետե}
տգէտ է, բժշկութեան մասին հասկացողու-
թիմ չունի, կամ եթէ ուղում է բժշկուել,
հասկանում է բժշկութեան արժէքը, բայց մի-
ջոց չունի:

— Փոյթս չէ, թող մեռնի, ուրիշ կերպ
չի էլ կարող լինել, կեանքն այդպէս է. կամ
ես պէտք է ինձ զահ բերեմ այդպիսիներին,
կեանք գաբճնեմ անվերջ զառնութիւնների,
չը զնահատուած դրհերի մի շարք և ոչնչա-
նամ առանց ապրելու, կամ նրանք պիտի
ջախջախուեն կեանքի անողոք, անխուսափելի
շարիքի առաջ: Ընտրութիւնը դժուար չէ, ես
ապրել եմ ուղում, ինչպէս ամեն մի էակ տի-
եղերքի վրայ ապրել է ուղում: Հասարակական
սիրամիզի շերտերում պայքարը եռում է. ան-
հատներ ու դասակարգեր աշխատում են վեր
բարձրանալ, ոմանք մնում են իրանց նոր
գրաւած տեղերում, ուրիշները վար են զլոր-
ւում, հոգըներն ապրում են, թոյլերը խեղլ-
ուում, արդարացներով «վայ յազթուածին» ա-
սացուածքը: Ասա, ինչ ուղում ես, բայց կեան-
քըն այսպէս է, կոիւ, կոիւ...

— Թոնդ այդ, ընդհատեցի նրան, դա շատ
հին երգ է, և դու հարիւրաւը անդամ կըսկ-

նել ես քո այդ վայրենի թեօրիաները. մոռա-
նալով՝ որ վիխովայութեան վերջին խօսքը
քիզ չի պատկանում բարեբաղդաբար:

— Լաւ, կը թողնեմ, բայց այն ժամա-
նակ դու էլ խօսք տուր դադարեցնել այս վէ-
ճը, որ սկսում է ձանձրալի դառնալ, որովհե-
տե շատ հին վէճ է և ոչ մի օգուտ չունի,
հաւատացնում եմ քեզ, քո վաստերն անդօր
են փոխել իմ հայեացքները կեանքի վրայ:
Խօսնեք ուրիշ բաների մասին:

— Թող այդպէս լինի, պատասխանեցի
ես:

Սրդարի, դա մի շատ հին վէճ էր: Բն-
կերս մի յամառ նիւթապաշտ էր, և ամենից
շատ հետաքրքրուում էր այդ նիւթապաշտական
գալուցի վիխովաներով, այստեղից էլ քաղել
էր կեանքի բարոյական սկզբունքները: Տա-
րիների ընթացքում անթիւ անդամ մնեք վի-
ճել էինք, երբեմն նոյն-իսկ խոռվել իրարից:
Նա ծաղրել էր իմ ալտրուիստ զալափարնե-
րը, ինձ անուանել էր ֆանտազիօր, ես նրան
անուանել էի կարիերիստ, աֆերիստ, նիւթա-
պաշտ, խոռվել էինք իրարից, բայց կրկին
հաշտուել, կրկին մնացել լաւ ընկերներ: Վէճ
յարուցանողը միշտ ես էի լինում, յարձակուում
էի առաջինը ես, և դա իր պատճառն ունէր.

ինձ միշտ թուում էր, թէ ես պիտի յաջողեց-
նեմ նրա գլխից հանել այնքան չոր նիւթա-
պաշտական գաղափարները և անվերջ փորձեր
էի անում, ընկերական մի անխղելի կապով
կապուած էին նրան. սիրում էի, որովհետև ինձ
թուում էր, որ նրա սիրաը բարի է, շիտակ, և
որ կեանքի դառնութիւններն են նրան այդ-
պէս շարացրել, նրա մէջ թուացրել, բայց ոչ
խսպառ չնջել, աղնիւ դոհներ բերելու ձգուում-
ները: Եւ արդարե, նա խիստ շատ էր տան-
չուել մինչև աւարտելը, իր բոլոր ջանքերը մի
որ և է նիւթական նպաստ ստանալ ուսման
ընթացքում, ապարդիւն էին անցել և այժմ
կ'ասես հաշիւ էր պահանջում կեանքից իր
քաշած նեղութեան, իր կրած խեղճութեան
համար:

Սակայն իմ ջանքերն ըստ երեսյթին ի-
զուր անցան, եւ սա վերջին անգամն էր, որ
ես նրա հետ վիճեցի նոյն խնդրի մասին:
Թողեցի, որ կեանքը լինի ասի նրան այն,
ինչ ես աշխատում էի հասկացնել: Այնուհետեւ
ամեն անգամ երբ ես գալիս էի նրան այցե-
լութեան, բարձրաձայն կանչում էի գոնից
«բժիշկ Արաքսեան» և ապա մենք սկսում էինք
խօսել բոլորովին այլ նիւթերի մասին, ծիծա-
ղում էինք, զուարձանում և բաժանուում:

Մեր կեանքի այն շրջանն էր, երբ մարդ
ոչ ուսանող է, ոչ ազատ, հասուն մարդ: Գեռ
սենեակը անկարգ, ծխով լի, զեռ սեղանի
վրայ լիմոնի և պապիլոնսի կտորներ, զեռ
թէյի բաժակները այս ու այն կողմ գրքերին
խտոն, անկողինը ճմուտած, շորերը թափ-
թփուած, խօսակցութիւնը զուարձալի, հա-
նաքները՝ անվերջ: Հին հոգսերից, ըննու-
թիւններ անցնելու գժուարութիւններից պըս-
ծած, նոր կեանքի հոգսերին, դառնութիւն-
ներին անծանօթ, կամ երիտասարդ ոյժերի,
կարողութեան վրայ վստահ հեգնութեամբ,
հպարտութեամբ ապագային նայելով՝ սենք
անց էինք կացնում սեր կեանքի այդ անցողա-
կան շրջանը:

Լաւ օրեր էին:

Մի անգամ, երբ մենք դարձեալ ուրախ
ուրախ խօսում էինք, յանկարծ հարևան սե-
նեակից լսուեց մի մանկական ձայն, որ կար-
գում էր զիրկապ անելով:

«Բը-ա-դը, բադ. բը-ա-շը, բաշ. բը-ու-ն,
բան:»

— Ո՛չ, բը-ու-ն, բուն, ուղղեց երեխայի
սխալը մի այլ հաստ ձայն, որ ըստ երեսյթին
դասատուի ձայնն էր:

— Բը-ու-ն, բուն, շարունակեց երեխան.

տը-ու-ն, տուն:

— Լաւ է, այժմ դու ասա, զնուշիկ:
— Ճը-ու-ն, շուն, սկսեց մի այլ տեղի
բարակ մանկական ձայն, նը-ու-շ, նուշ, ու-շ,
ուշ. նուշ ու շուն:

— Լաւ է, Ճուշիկ, դու էլ ես լաւ սովո-
րել, վլայ բերեց նոյն հաստ ձայնը: Ապա նա
սկսեց նոր գաս տալ թէ մէկին և թէ միւ-
սին, կրկնեց, երեքինեց գասը, և դուրս ու-
ղարկեց:

Մենք երկուսով էլ, մեղ անհասկանալի
մի պատճառով, ամեն բան թողած, ուշի ու-
շով լուս մէկնք, ինչ որ կատարւում էր բա-
րակ պատի միւս կողմում:

Քիչ յետոյ, մենք տեսանք, թէ ինչպէս
մէկը դուրս եկաւ հարեւան սենեակից, անցաւ
մեր լուսամուտի առաջից: Դա երեխ դասա-
տուն էր. մի երիտասարդ մարդ, խոնացած
վերարկուով, որ նա ինամքով կոճկել էր վե-
րից վար և կարծես մըսում էր, թէ աշնա-
նային տաք օրեր էին, զլիսարկը խորը քա-
շոծ ճակատին՝ դէմքի պրօֆիլը հազիւ տե-
սանք, դա մի գունատ, նիհար երիտասարդ
էր: Նա անցաւ, իսկ հարեւան սենեակում ձայ-
ները չը դադարեցին. երկու մանուկներն այժմ
սովորում էին, իրար օգնում. կը-ա-տը-ու,

կատու, կը-ա-շ-ի, կաշի. ասում էր մէկը.
կը-ու-ա, կուտ. ասում էր միւսը. երբեմն էլ
երկուի ձայները խառնւում էին իրար, և էլ ո-
չինչ չէր հասկացում, բայց մենք շարունա-
կում էինք լսել լուս, խորասուզուած...

Օրեր անցան, նոյն ձայները, համարեա
միենոյն եղանակով, մօտաւորապէս միենոյն
ժամերին լսում էին հարեւան սենեակից. պարզ
էր, որ մէկը կանոնաւորապէս գաս էր տալիս
երկու մանուկներին: Միակ փոփոխութիւնը,
որ նկատում էր, այդ այն էր որ ուսուցիչը
օր աւուր աւելի և աւելի էր հազում, և շատ
անգամ ստիպուած էր ընդհատել իր արտա-
սանած վանկերը իր չոր հազը դադարեցնե-
լու համար, ապա կրկնի սկսում էր նոյն համ-
րերութեամբ, կրկնում էր, սովորեցնում էր,
յետոյ դուրս գնում, թողնելով՝ որ երեխանե-
րը թոթովին իրանց գասերը:

Կամաց կամաց մենք ընտելացանք այս
բոլորին. Էլ չէինք ականջ դնում, երբեմն էլ
նոյն-իսկ սրախօսութիւնների առարկայ էինք
դարձնում երեխաների թոթովանքը, նրանց
արտասանութիւնները, կամ ուսուցչի այս ու
այն խօսը. օրինակ «Ճնուշիկ, դու խելօք ես,
Գարեգինը այսօր խելօք չի», կամ, «Չեր եր-
կուսին էլ սիրում եմ, երկուսդ էլ խելօք էք»:

եւ ուսուցիչն այս խօսքերն արտասանում էր
այնպիսի հայրական քնքշութեամբ, որ ան-
հնարին էր ուշը չը դարձնել: Օուտով այդ էլ
մեզ ձանձրացրեց, մենք չը գիտէինք, ո՞վ է
այդ ուսուցիչը, նոյն-իսկ մոռացութեան տու-
ինք նրան, լուսամուտի առաջից անցնելիս
չէինք էլ նայում վրան:

Ասպէս անցան մի քանի օրեր և շա-
բաթներ. Բայց վերջին օրերը, երեխաների
ձայնն էր լուսում միայն, ուսուցիչն այլ և չէր
անցնում լուսամուտի առաջից, և նա էլ դաս
չէր տալիս, այլ հազում էր...

Նու մասունք անուն ու ուսուցչուն ու ուսու-
թեանս նիւթը կազմող դէպքերը, տաս-
նեակ տարիներ են անցել, բայց ես դեռ յի-
շում եմ բալոր ամենայն մանրամասնութեամբ.
և դա առանց պատճառի չէ: Մարդիկ շեն
մոռանում իրանց մանկութեան յիշողութիւն-
ները, կեանքի արշալոյսին ամեն մի երեսի,
ամեն մի դէպք ոչ միայն նոր է, հազար և
զարմանալի է մանկան համար և խորը կեր-
պավ ազգում է նրա կոյս մտքի, երեակայու-
թեան վրայ, յաւիտեան չը ջնջուելու համար
իմ կեանքի երկրորդ շրջանի արշալոյսին ես
էլ մի մանուկ էի, մի հասակ առած մանուկ,
որ զարմանքով էր տեսնում աշխարհը, մարդ-
կանց, կեանքը իր չար ու բարի կողմերով և
որքան շատ բան կար անծանօթ, զարմանա-
լի: Սակայն այդ բոլոր նորութիւններից, բոլոր
ուշագրաւ երեսիներից ոչ մէկն այնպէս չը
ցնցեց իմ երեակայութիւնը, ոչ մէկն այնպէս

II

իսորը չը տպաւորուեց իմ մտքում, ովքան իս ընկերոջ բժ. Արաքսեանի մէջ տեղի ունեցած զարմանալի հոգեկան փոփոխութիւնը: Դա մի դէպք չէր, այլ մի ամբողջ աշխարհ, մի ամբողջ կեանք, մի անծանօթ՝ քիչ հասկանալի կեանք, որ յանկարծ բացուեց իմ առաջ: Ես որ կարծում էի չնորհիւ իմ դիպլօմի ամեն բան իմանալ, ամեն ինչ հասկանալ, բացատրել, լուծել, յանկարծ ինձ զգացի աշակերտի, ամենատպէտ, թոյլ աշակերտի կացութեան մէջ:

Այն օրը, լաւ յիշում եմ, մոայլ թխպսա անձրեային օ՛ էր: Բանաստեղծներն իրանց պատկերաւոր նկարագրութիւնների մէջ սիրում են արտաքին բնութեան և մարդկային հոգու պատկերների մէջ տխուր, կամ ուրախ զուգադիպութիւն գանել: Սակայն այդ օրուայ մոայլը բոլորովին համապատասխան չէր իմ սրտին, բնութիւնն ասես սգաւոր էր, արտաս- ւում էր մօտալուա ձմբան երկիւղից, իսկ ես ուրախ էի և սիրաս լի հրճուանքով: Տէր Աս- տուած, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, մի ամիս շը կար աւարտել էի, և արդէն լաւ պաշտօն ունենալու բաւական դրական յոյսել կային:

Եւ այսպէս ես զնում էի ընկերոջս մօտ

մտմտալով իմ ապագայի մասին: Ես ընկերոջս պէս նիւթապաշտ չէի, իմ բոլոր երջանկութիւնը կայանում էր իմ փառասիրութեան մէջ. Ես ուզում էի պաշտուել այն զոհերի զնով, որ ես պատրաստ էի յանձն առնել ժողովի համար: Ես ուզում էի, որ իմ մասին ապագայում զբն, խօսին, պատմեն, որ ինձ մատով ցոյց տան, երբ անցնելու լինեմ փողոցներով, իսկ այսքանի համար ես պատրաստ էի լուսամուտից վայր նետուել զլուխս փշել: Մատածելով այս բոլորի մասին, ես երեմն ընկնում էի էքստազի մէջ, զգում էի, որ ըն- դունակ եմ ամենախելագար զոհողութիւններ յանձն առնել, անկեղծ էի ողեսորութեանս բո- պէնէրում, և վէճերի ժամանակ իմ խօսքելը հնչում էին ուժով, համոզիչ շեշտով: Ընկեր- ներս ինձ ալբրուխս էին համարում, այդ ա- ծականը ես ընդունում էի հպարտութեամբ, և հաստատ որոշել էի, կեանքի մէջ էլ փառքով կրել:

Ես երեակայում էի, թէ ինչպէս կը մանեմ կորած, մոռացուած խրճիթները, մութ- նկուղները, թէ ինչպէս կը սրբեմ այնտեղ ցաւերի մէջ տառապաղների արցունքները իմ բժշկական հմտութեամբ, և իմ նիւթական զոհերով, և երբ դուրս գնալու լինեմ, ինչպէս

կը լսեմ յետեիցս աղօթքի և օրհնութեան
մըսոնչներ. օ՛, դա մի ամբողջ երանութիւն
էր ինձ համար:

Եւ ուրիշ շատ լաւ բաներ էի մտածում
ես, երբ հասայ ընկերոջս բնակարանին: Ար-
դէն պատրաստում էի ըստ իմ սովորականին
«բժ. Արաքսեան» գոռալով ներս ընկնել, երբ
ականջիս հասած մի ձայն ինձ ստիպեց սա-
ռած կանգ առնել:

—«Կը-ու-ա, կուտ. կը-ա-շը-ի, կաշի».
նոյն մանկական ձայները, որ սովորաբար
միշտ լսում էին հարեւան սենեակից, բայց
ինչ որ ինձ ապշեցրեց այսօր, այդ այն էր, որ
այս անգամ ձայները գալիս էին ընկերոջս
սենեակից, բժիշկ Արաքսեանի սենեակից:

Երկոյթն այնքան տարօրինակ էր, որ
ես մի ըստէ կալծեցի թէ լսողութիւնս ինձ
խարում է, և թէ գուցէ ես սփամամբ հա-
րեան սենեակի զրան առաջ եմ դուրս եկել:
Բայց անկարելի էր, դրան վրայ շատ պարզ
երկում էր իմ հանաքների և հեղնութեան
մշտական առարկան, այցկարաը «բժիշկ Ա-
րաքսեան». ես ինքս ինձ համոզելու համար
ակամայ նոյն-իսկ կարդացի՝ «բժիշկ Արաք-
սեան»: Յետոյ մտածեցի, թէ մի գուցէ երե-
խան կարդում է հարեան սենեակում և ես

այստեղ ձայնն եմ լսում, մօտեցայ կամացուկ,
ականջս զըի ընկերոջս զրան կողպէքի վրայ,
ոչ մի կասկած չը կար. «Կը-ու-շը-ա, կուտ.
կը-ա-շը-ի, կաշի. պարզ և որոշ լսում էր
մանկական ձայնը ընկերոջս սենեակից: Այնու-
ամենայնիւ ես բոլորովին չը համոզուեցի, և
գուուը հրեցի ներս մասյ, եթէ այդ վայկեա-
նին բժիշկ Արաքսեանը յանկարծ մի մահակի
հարուած իջեցնէր զլիխս, գուցէ ես այնքան
չը զարմանայի, որքան զարմացրեց ինձ տե-
սածս, և ես սառած մնացի զրանը կպած,
առանց առաջնալու, առանց մի բառ ասելու
և նայում էի: Ընկերս նստել էր սեղանի ա-
ռաջ, իր երկու կողմում տեղ էին բռնել եր-
կու երեխաներ, մի հօթ տարեկան տղայ և մի
ինն տարեկան աղջիկ, զանգրահեր գլուխնե-
րով: Երկու փոքրիկ գեղջուկ դէմքեր էին,
վախիվելով, անկատահ նայեցին ինձ և կրկին
գլուխները քաշ ձկեցին իրանց փոքրիկ գրքե-
րի վրայ՝ կրկնելով իրանց անկերջանալի
վանկերը. «կա-տու, կա-շի, շա-մամ»: Բժիշկը
լուրջ, հանգիստաւոր դէմք ունէր, նա վերև նա-
յեց, հաղիւ ձեռքով ինձ նշան արաւ, որ նըս-
տեմ և շարունակից:

—Զնիշիկ, այժմ գու կարդա:

«կա-տու, կա-շի, շա-մամ» շարունակեց



ԱՐԱՔՍԵԱՆ
ԱՐԱՔՍԵԱՆ

երեխան։ Զը նայելով նրա հրաւէրին, ես նըստել չը կարողացայ. ես ապշած էի. ծիծաղել չէի համարձակում, պատկերի լրջութիւնն ինձ կաշկանդել էր. հարց առև, խօսել նոյնպէս սիրտ չէի անում, վախճնում էի խանգարել, խսկ նստելու մասին չէի էլ մտածում, ես ապշել էի, սառած մնացել իմ տեղում, գըլխարկը ձեռքիս, աշքերս չուած նայում էի այս պատկերին, նայում էի և էլ չէի մտածում. երազ էր...

Որչափ մնացի ես այսպէս կանգնած՝ չեմ յիշում, միայն երբ բժիշկը վերջացրեց դասը, երեխաներին դուրս ուղարկեց խաղալու, նրանք մօտեցան զրանը զրքերը ձեռներին, այն ժամանակ միայն, ես հեռացայ դունից։

—Զարմացած ես, այնպէս չէ, ասաց բժիշկը երեխսի ժպտալով։

—Զարմացած... դու այն ասա խելք տեղն է, նախորդ գիշեր քեզ հետ մի բան չի պատահել։

Պատասխանի փոխարէն նա մի պինդ ծիծաղեց, ապա մի առ ժամանակ երկսով էլ լուռ կացանք։

—Լսիր, դարձաւ նա ինձ, երբ ես տեղ բռնեցի նրա դէմ ու դէմ շարունակ հարցական հայեացքս իր դէմքին ուղղած, լսիր ինձ և մի

դարմանար։ Երբ այնտեղ, համալսարանական նստարանի վրայ դու և քո խելքի, քո սկրդրումների մարդիկ խօսում էիք ժողովուրդից, նրա ցաւերից, խօսում էիք ալտրուիզմից, ծրագրում էիք ձեր անձնազո՞ն գործունէութիւնը. գիտակ էիք համարում ձեզ կեանքի համար, պատրաստուած նրա ձախորդութիւնների դէմ գնալու, նրան ընկճելու ձեր բարոյական ոյժով, ձեր անձնութիւններմբ, դուք բոլորդ էլ սուտ էիք խօսում առանց իմանալու, դուք իլլիւզիաների մէջ էիք, դուք անկեղծ էիք բովէապէս։ Զեր գիմացկանութեան, ձեր անկեղծութեան, ձեր անձնազո՞նութեան յարատեութիւնը կեանքը միայն կարող է ապացուցանել, հաստատել, բայց դուք իրաւոնք էիք համարում ձեզ արդէն հասարակական անձնազո՞ն գործիչներ համարել, խսկ ինձ մտերիխստ, կարլիիքիստ։ Խոկ երբ ես պընդում էի, որ ինձանից դուրս աշխարհը գոյութիւն չունի ինձ համար, որ ես աշքերս կը փակեմ աշխարհի ցաւերի առաջ, կը քաղեմ վարդերը, խոյս տալով փշերից, ես էլ անզիտակցաբար սուտ էի ասում, և մենք բոլորս էլ երեխաներ էինք։ Աշխարհը, կեանքը ոչ դուք էիք ճանաշում, ոչ ես, այժմ էլ չենք

ճանաշում, և դեռ յայտնի չէ, թէ երբ կը
ճանաշենք, և երբոր ճանաշենք, ի՞նչ կը շի-
նենք: Բայց ուզմում ես, ես քեզ ցոյց տամ,
թէ ով է ճանաշում աշխարհ, ով է առանց
աղմուկի լուծել ձեր բոլոր թէօրիաները, ով
է մոռացութեան, խաւարի, թշուառութեան,
ապերախտութեան մէջ իմ նիւթապաշտու-
թեան հիմքերը քանդել, և առանց աղմուկի
գծել մի ճանապարհ, որով հազիւ թէ մենք
գնալ համարձակուենք, այն աստիճան փշոտ
է նա, այն աստիճան զժուարագնաց է. առա,
ուզում ես տեսնել այդ մարդուն:

—Ես քեզ չեմ հասկանում:

—Չես հասկանում. լաւ ես կ'աշխատեմ
առանց հանելուկների խօսել, Քանի՞ օր է, որ
դու չմս եկել ինձ մօտ:

—Երեք օր է կարծեմ:

—Կարճ ժամանակ է, Տէս Աստուած,
բայց այնքան շատ ապրեցի: Դու շատ ծաղրե-
ցիք իմ դրանը կպցրած այդ կարտը, լոիր
այժմ, թէ նա ինչ թանկագին ծառայութիւն
մատուցեց ինձ:

Հարեան սենեակում ապրովը մի գիւղա-
կան ուսուցիչ է, այն մարդկանցից մէկը, ո-
րոնց մենք սովոր ենք «վարժապեա» կէս հեղ-

նական, կէս ալհամարհական բառով կնքել.
վերջին օրերս զու նկատեցիք, որ նրա դա-
սախոսելու ձայնն այլ ես չեր լսում, նա
միայն հազորմ էր: Նա հիւանդ է, պառկած,
և առանց օգնութեան, առանց ծանօթների,
առանց միջոցի: Ի՞նչ լաւ, որ նա իմ այց-
կարտից մի օր իմացել է. որ իր հարհանը՝
ես քժիշկ եմ:

Երկու օր առաջ նստած էի սենեա-
կումս, երբ զուռս կամացուկ բացուեց, և
շեմքի վայ յայտնուեց այն փոքրիկ աղջիկը,
որին քիչ առաջ տեսար ինձ մօտ: Նա մտաւ
և կանգ առաւ, զլուխը քաշ ձգեց ու մնաց.
Տէր Աստուած, այն ինչ զէմք էր, ով, որ
հոգեբանը, որ բանսասեղծը, որ նկարիշը
կարող է նկարագրել մի մանկական զէմք, ուր
զծագուած են անմիզութիւն, երկիւդ, վիշտ,
յուսահատութիւն և բոլորը միասին կաղմում
են մի այնպիսի խառնուրդ, մի այնպիսի
պատկեր, որի առաջ մարդ ակամայ զիսարկը
սիստի հանի, ասես աստուածութիւնն է ու-
ղարկել իր հրեշտակը քեզ ասելու ինչ որ մո-
ռացուած ճշմարտութիւններ: Ի՞նչ արժեն
այդ պատկերի մօտ քո բոլոր ճառերը,
բոլոր պերճախօսութիւնները, բոլոր փաս-
տերը, որոնցով դու աշխատում էիր ջրել

իմ նիւթապաշտ թէօրիաները, աշխատում էիր ինձ ալտրուիստ գարձնել: 2է, հոգիս, դժբաղդ մանկական արցունքի մի կաթիլը աւելի համոզիչ, աւելի յուղիչ է, քան ամենահանձարեղ, ամենասպելճախօս քարոզները հիմնուած անհերքելի փաստերի վրայ:

Ճուշիկը, այնպէս է նրա անունը, նայեց ինձ վախիսելով, երկու կաթիլ արցունք կար կախած սիրուն, անմեղ աչքերից:

— Հայրի կս հիւանդ է, ասաց նա և հեկեկալով ծածկեց երեսը:

Մի սառը բան անցաւ մարմնովս, ես դողացի, հասկանո՞ւմ ես, ես դողացի այդ խեղճ, այդ թոյլ, դողդոջուն արարածի առաջ: Ինչո՞ւ դողացի, ես խօմ պինդ ներվեր ունեմ. դու այդ գիտես, ես մինչեւ այժմ էլ շեմ կարսղանում հասկանալ, թէ այն ինչ սարսուռ էր որ անցաւ իմ մարմնով: Ես լուռ վեր կացայ մօտեցայ երեխային, նա վախենալով էր նայում ինձ, ես շոյեցի գլուխը, չը գիտեմ ինչ ասացի, կարծեմ բան էլ ասացի, նա սրտապնդուեց, վերև նայեց, ես համոզուած եմ, որ արտասուող հրեշտակը այդպէս կը նայէր իր արցունքի միջից, ես չը կարողացայ համբերել, բռնեցի այն սիրուն գանդ-

րահեր գլուխը, համբուրեցի և կըծքիս սեղմեցի պինդ, պինդ. օ, ես դեռ երբէք, երբէք այնպէս չէի համբուրել մէկին: Ես առաջին անգամ կեանքում համբուրեցի աշխարհի վիշտը, մերձաւորի ցաւը սրբաղան, այդ անմեղ դէմքի վրայ:

Քիշ յետոյ ես հիւանդի մօտ էի:

Նա էլ ուղարկել ինձ մօտ երեխային: Հիւանդանալով անյուտութեան և անտէրութեան մէջ, նա մնում է մի առժամանակ առանց խնամքի. ի վերջոյ որոշում է դիմել անձանօթ բժշկի օգնութեանը.

Ահա երեք օր է, որ ես անց եմ կացնում նրա մօտ ամբողջ ժամեր: Գաւալից, գիւղերից է զալիս, էլ պաշտօն չունի, էլ դպրոց չը կայ, եկել է պաշտօն գտնելու համար:

Ուրքան բան ասաց ինձ. ինչե՞ր նկարագրեց, որքան է ապրել այդ մարզը: Խօսում է նա... ձեզ պէս չի խօսում, ընկեր, նա չի երևակայում, նա չի գեղեցկացնում, նա միայն ասում է մերկ, կոպիտ ճշմարտութիւնը, ցաւեր է պատմում, որոնց առաջ ոչինչ են ձեր բոլոր ճուռականութիւնները: 2է, մենք ոչինչ չը գիտենք:

Կուրծքն է հիւանդ խեղճի. ես արեցի,

ինչ որ կարող էի, նկատելով որ նու սաստիկ ցաւում է երեխաներին դաս տալ չը կարողանալու համար, յանձն առայ պարապել, մինչև որ ինքը կը վեր կենայ, ասացի նրան, բայց հազիւթէ... իմ առաջարկութիւնը նրան անշափ ուրախացրեց:

III

Մի ողորմելի սենեակ էր, ուր ներս տարաւ ինձ ընկերս, մի անկողին, երեք ողբալի աթուներ, և մի սեղան, ահա բոլոր կարստին:

Մի մաշուած դէմք հազիւ ծրագրուում էր բարձի սպիտակութեան վրայ, և վերմակի տակ մի նիհար, ոսկրացած մարմին: Խոր ընկած աչքերը հազիւ էին նշմարում, իսկ նիհար այտերը մի անախորժ, հիւանդոտ կարմրութիւն ունէին: Թաւ, երկար և սե մազերը անհոգ ուլորներով բոլորել էին կընճուտ և զուրս ցցուած ճակատը: Անխնամ ձգած միրուքը խճճուել և ծածկել էր շըրթունքներն ու բերանը և ամբողջ դէմքը տան- չանքի, յոզնածութեան կնիք ունէր վրան: Ճատ ապրած դէմք էր այն, տարիներն ան- հետ չէին անցել վրայով: Մեղ տեսներով նա ժպտաց մի տեսակ թախծալի մեղութեամբ,

և այդ ժպտով մի առանձին խորհրդաւորութիւն տուեց այդ թուլս դէմքին:

— Ընկերու է, նոյնպէս բժիշկ, ասաց բժիշկ Արաքսեան, ներկայացնելով ինձ:

— Ճատ և շատ ուրախ եմ թէ ձեզ և թէ նրա համար, ասաց նա անկողնի տակից՝ դուրս հանելով նիհար, ոսկրոտ ձեռքը և մեկնելով մեզ: Երկու բժիշկ, մի հիւանդ. շարունակեց նա ժպտալով նոյն թափծալի ժպտով, երկու խելքը մէկից լաւ է, այնպէս չէ. գուցէ կարողանաք կեանք տալ այս անկենդան մարմնին:

— Իդուր էք գանգատում, ասաց ընկերու, այսօր կուք շատ լաւ էք երկում, դէմքերդ շատ ախորժ արտայատութիւն ունի:

— Իրաւունք ունէք. ճշմարիտ, որ այսօր լաւ եմ զգում ինձ. միայն այս հազը... և ծանօթ, անախորժ հազը կրկին ընդհատեց նրա խօսքը, բայց այդ էլ ոչինչ, շարունակեց նա, քանի՛ տարի է, որ հազում եմ: Ես այժմ այնքան լաւ եմ, որ կը նստեմ և մի քիչ կը խօսեմ, խօմ զիտէք, որ ուսուցիչները շատախոս կը լինեն, այդ նրանց արուեստն է, որ ի վերջոյ բնաւորութիւն է դառնում, և տարուինակ էլ չէ, երբ մարդ խօսում է անընդհատ տասն և հօթ տարի:

— Միթէ այդքան ժամանակ դուք միշտ ուսուցիչ էք եղած:

— Այն, միշտ, շարունակ, մի ամբողջ կեանք էք, այն էլ անցաւ, և չը գիտեմ մի բան թողեց յետեից, թէ ոչ. օ, կեանքը շատ է հզօր, և մենք չափազանց թոյլ, չափազանց քիչ, պէտք էք մի քանի անդամ աւելի ապլիկացիանի անկամամ ամելի տահճուել դրական հետևանքների համելու համար: Է՞հ, վերջապէս, թողնենք այդ, ինձ հետաքրքրողն այժմ այդ երկու երեխաներն են, որոնց ես այդպէս չէի կամենայ թողնել աշխարհում: Ո՞վ զիտէ, թէ ինչ կարող է պատահել ինձ հետ, իսկ նրանք մայր էլ չունեն:

— Գեղն ընդունեցիք, հարցրեց Արաքսեանը:

— Ո՛չ, տուող չեղաւ: Ջուշիկը փորձեց չը կարողացաւ: Ես էլ, Է՞հ, էլ ոյժ չի մնացել:

Արաքսեանը գլուխը օրօրեց, մօտեցաւ, վերցրեց զեղի սրուակը, կաթեցրեց զգալի մէջ, և քնքշութեամբ բարձրացնելով հրանդի գլուխը, դեղը խմացրեց:

Հազը վերսկսուեց, հիւանդը թուլացած՝ ընկաւ բարձի վրայ, մենք մնացինք անխօս, և նայում էինք: Ես խօսք չէի գանում, իսկ

ընկերս չը գիտեմ ինչու էր լոռում: Հիւանդը
կամաց կամաց աչքերը փակեց և քննեց:
Մենք զգուշութեամբ դուրս եկանք,
գնացինք ընկերոջս սենեակը, նստեցինք և
շարունակում էինք լուել. խօսել չէր լինում.
Երկիս մտքերն էլ փոխադարձաբար իրար
համար շատ էին պարզ, որպէս զի պէտք լի-
նէր արտայայտուել:

Լոռութիւնն ընդհատեց Արաքսեանը.

— Կը մեռնի, ասաց նա աչքերը մի կէ-
տի լառած:

— Միթէ:

— Այս, կը մեռնի, և երկու որքերը...

— Անտէր, անտիրական կը մնան:

Ընկերս նայեց ինձ մի հայեացքով, որ
իս լաւ հասկանալ չը կարողացայ, բայց որը
լաւ չէր ինձ համար, ես կուգէի, որ նա այդ-
պէս չը նայէր ինձ: Նա այսօս բոլորովին
տարօրինակ էր. իմ տրամադրութիւնը բալո-
րովին այլ էր, երբ նրա մօտ եկայ, այժմ
չը գիտեմ ինչու նրա առաջ ես ինքս ինձ լաւ
չէի զգում, ես՝ որ այնքան տարիներ նրան
խրատում էի երեխայի պէս. Արաքսեանն էլ
չէր խօսում: Լոռութիւնն ինձ խեղգում էր.
ուստի վերկացայ, զլիսարկս առայ և դուրս
գնացի:

Այդ ամբողջ օրը ես թափառում էի, և
չը գիտեմ ինչի մասին էի մտածում, բայց
գիտեմ, որ բարձերի սպիտակութեան վրայ
ծրագրուող այն գունատ պատկերը և ընկե-
րոջս մոայլ դէմքն ինձ հետեւում էին քայլ առ
քայլ: Գիշերն էլ լաւ չը քննեցի և միւս օրը
վաղ առաւտօտից կրկին հիւրանոց գնացի:

Պատշգամիքի վրայ կանգնած էր Արաք-
սեանը, զլուկիր յենած սկանը և մոայլ հայեաց-
քը դէպի հեռուն ուղղած: Դեռ երբէք ես նրան
այդքան տիսուր չէի տեսել: Ոտնաձայնս լսե-
լով նա զլուկն ինձ դարձեց և առանց դէմ-
քի արտայայտութիւնը փոխելու, դարձեալ
նախորդ օրուայ իշխողի տոնով ասաց.

— Աւելի վաղ կարող էիր գալ:

— Մեռած...

Պատասխանի փոխարէն նա բռնեց ձեռ-
քիցս և ներս տալաւ հիւանդի սենեակը: Ու-
սուցիչը հոգեվարքի մէջ էր. երկու երեխա-
ները նրա այս ու այն կողմում կծկուած հե-
կեկում էին:

Արաքսեանը մօաւեցաւ նրանց հանգստաց-
նելու. հիւանդը բորբոքուած աշքերը դէպի
նա գարձեց, ապա նայեց արտասուող երե-
խաներին երկար, երկար և երեկու կաթիլ
արտասուքներ կախուեցին նրա կոպերից: Յե-

տոյ ծածկոյթի տակից հանեց դողդոջուն
ձեռքը և մեկնեց գէպի փոքրիկները; Նա էլ
չէր խօսում և մահուան համբ լեզուով նրանց
մեղ էր յանձնում: Արաքսեանը գրկեց երե-
խանիրին, համբուլեց, հիւանդը տեսաւ այդ,
հանգստացաւ կարծես, փորձեց ժպտալ ի
նշան գոհունակութեան, բայց գունատ շըր-
թունքները միայն ծումուեցին, աչքերը փա-
կուեցին և անզօր, անկատար ժպիտը յափի-
տեան սառեց նրա գէմքին:

Նա մեռաւ:

— Հայրիկ, հայրիկ մրմնջում էին որբե-
րը և Արաքսեանը հեկեկում էր նրանց հետ,
իսկ ես տեսարանի վեհութեան առաջ քարա-
ցած՝ կանգնել էի ինչ անելս չ'իմանալով.
յիշում եմ սակայն, որ կ'ուղէի մօտենալ զրկել
և համբուրել Արաքսեանին բացականչելով.

— Օ՛, աղնիս հոգի, ինչ դժուար է ե-
ղել ճանաչել մարդկային սիրտը: Բայց դրա
փոխարին ես էլ դառն, դառն արտասուեցի:

Մի օր յետոյ չորս հոգի էինք հետեւում
սայլի դագաղին, ես ու լնկերս երկու որբերի
ձեռքից բանած: Թաղումից վերադարձին Ա-
րաքսեանը որբերին իր սենեակում տեղաւորեց
ե երբ մի քանի օր յետոյ պաշտօն ստանալով
ես եկայ նրան վերջին մնաս բարին տսելու,

դրսից վերստին լսեցի երեխաների ձայնը
«Բագ, նուշ, շուն...»

— Դնաս բարի, ասաց նա ինձ և շարու-
նակեց դասը, Ջնշիկ, դու կարդա:

— Իսկ դժու ինչ ես անում, ուր ես ու-
ղում գնալ:

— Ե՞ս... ես չը զիտեմ, ես էլ պաշտօն
չեմ վնտուում, գնում եմ, երեկ մի կտոր հացը
պակաս չի լինի, աշխարհը լայն է, ցաւերն
անթիւ...

— Մնաս բարի...

Պատմութեան մասնակիւն

500
ՀԱՅՈՎ ԼՈՅԱ ԿԸՏԵՍՆԻ

ԷԼ. ԹԺՒՅԹԻ

ՄՊԻՏԱԿ ԾԱՂԻԿԸ

Թարգ. Ա. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ

ՀՀ Ազգային գրադարան



NL0116930

Պատմակ Քյորուց

ՀՈՅՍ ԵՎ ՏԵՍՆԵԼ

1. ԹԱԹԱԽՄԱՆ ԴՔԵՐԸ, ԼԵՒ, զինը 5 կ.
2. 26 ՏՎԱՄԱՐԴ ԵՒ 1 ԱՎՃԻԿ, Մակ-
սիմ Գոյլկու, թարգ. Մուշէ վ. . 5 կ.
3. ԽԵՆԹԸ և ուրիշ պատմածքներ,
վ. Փափագեանի 10 կ.
4. ԿԵԱՆՔԻ ԴԱՄԸ, պատմածք
Ա. Անդրոնեանի 5 կ.

ԳՐՔԵՐԻ ՊԼՄԱԿՈՐ պահեստը ՎՐԱ-
ԻՆ Է Ծ. Վարդանեանի տպարանում.
Տիֆլիս – Гаевская ул. Типография
М. Варданяна.

Տիգրանոս